**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2**

**ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/92 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

**ք. Երևան** **02 սեպտեմբերի 2026թ.**

2026թ. օգոստոսի 27-ից սեպտեմբերի 02-ը, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ օդորակիչների ձեռքբերման թիվ **ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/92** ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ա. Ղուկասյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի երթևեկության գծով տնօրեն, |
| Ա. Գալստյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կայարանային տնտեսության պետի տեղակալ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Ղուկասյանը, ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ս. Մելքոնյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ նիստին մասնակցում էին Հանձնաժողովի երկու անդամները, բացակայում էր «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Տեղեկատվական տեխնոլոգիաների» բաժնի պետ՝ Գ. Մուրադյանը, հետևաբար, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստը՝ իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ**

1. Գնման հայտով սահմանված՝ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների, աճուրդի առաջարկված մեկնարկային գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:
2. Ընթացակարգին հայտ ներկայացված մասնակիցների և ներկայացված հայտերը գնահատելու մասին:
3. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
4. Ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներ որոշելու մասին:
5. Համակարգի միջոցով գեներացվող հայտարարություն/ներ/ի, անգործության ժամանակահատված կիրառելու կամ չկիրառելու մասին:

6. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների եվ հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

7. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ, ԱՃՈՒՐԴԻ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ. օգոստոսի 27-ին, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում ժամը 14:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված, տեղեկացրեց, որ գնման գործընթացն իրականացվում է ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն և հայտարարեց գնման առարկաների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

ՀՀ դրամ

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Աճուրդի մեկնարկային գին | Մեկնարկ | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| 1-ին | Օդորակիչ 12000 BTU | 699300 | 28.08.2026 14:00 | 840000 |

Ընթացակարգի հայտերի ներկայացումն ու բացումը, ինչպես նաև՝ հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով՝ հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև Մասնակիցները/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցե, հեռ. | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|
| 1 | «Փրիթի Ուեյ» ՍՊԸ | ՀՀ ք. Երևան, Ծովակալ Իսակովի 48/1, +37477723135 | b2bvesta@gmail.com | 01829451 |
| 2 | «Զիգզագ» ՍՊԸ | ք. Երևան, Հյուսիսային պող. 1, տարածք 18, 011-900-800 (+143), 041670018 | tender@zigzag.am | 02500164 |
| 3 | «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ | ք.Երևան, Գ. Նժդեհ 21, +(37410)449968 | vlvtender@gmail.com | 02235463 |
| 4 | «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ | Ք.Երևան, Դավիթ բեկի 180/26, 077699551 | 5r.gasparyan@yandex.com | 01096027 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 5 | «ԱՅԹԻ ԷԼԵԿՏՐՈՍՈՖԹ» ՍՊԸ | Ք. Երևան, Խորենացի փ., շ.72/12, +37477474006 | h_davo@mail.ru | 00474273 |
| 6 | «ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ՍՊԸ | ք. Արարատ, Սուրբ Ամենափրկիչի 36, 094223255 | gnumner2024@mail.ru | 02840014 |

2026թ. օգոստոսի 28-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ համակարգի միջոցով գնահատման մեջ ներառված.

1. Հայտերը կազմվել և ներկայացվել են Ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան.

2. Ներկայացված հայտերում առկա են Ընթացակարգի հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.

3. Ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին, բացառությամբ.

- **«Փրիթի Ուեյ» ՍՊԸ**-ի կողմից Հավելված 1.3-ով ներկայացվող **«ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՁԵՎ»** փաստաթղթում Ընթացակարգի ծածկագիրը նշված է՝ «ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ»*, մինչդեռ Ընթացակարգի ծածկագիրն է՝ «ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/92»:

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ. օգոստոսի 28-ին Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած Մասնակիցների նախնական և վերջնական գնային առաջարկները.

Ներկայացված գնային առաջարկների և Մասնակիցների՝ ընտրված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

ՀՀ դրամ

| Չ/Հ | Զբաղեցրած տեղ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Կարգավիճակ /լրացվում է հայտերի գնահատման վերջնարդյունքում/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | Ընտրված մասնակից «X» |
| 1-ին | 1 | «Փրիթի Ուեյ» ՍՊԸ | 840000 | 699300 | 20% | 839160 | 599300 | 20% | 719160 | X |
| | 2 | «Զիգզագ» ՍՊԸ | | 700000 | 20% | 840000 | 630000 | 20% | 756000 | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 3 | «ՎԻԷԼՎ ի ՍԵՆԹՐ» ՍՊԸ | | 700000 | 20% | 840000 | 700000 | 20% | 840000 | |
| | 4 | «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ | | 7452140 | 20% | 8942568 | 7452140 | 20% | 8942568 | Մերժված |
| | 5 | «ԱՅԹԻ ԷԼԵԿՏՐՈՍՈՖԹ» ՍՊԸ | | 9999999 | 20% | 11999998.8 | 9999999 | 20% | 11999998.8 | Մերժված |
| | 6 | «ԲԱՐԵԼ ԱՎՈՒՄ» ՍՊԸ | | 200000005 | 20% | 240000006 | 200000005 | 20% | 240000006 | Մերժված |

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

2026թ. օգոստոսի 31-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:
2. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել Մասնակից/ներ/ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

2026թ. սեպտեմբերի 02-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. Մասնակից/ներ/ի կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել են հանձնաժողովի կողմից արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

2026թ. սեպտեմբերի 02-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն.
2. Համակարգի կողմից գնահատման մեջ ներառված հայտերի գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:
3. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Գնահատման մեջ ներառված մասնակցի անվանումը* | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-ին | «Փրիթի Ուեյ» ՍՊԸ | բավարար |

*Գնահատվում են միայն մասնակիցների կողմից ներկայացված այն հայտերը, որոնք համակարգի կողմից ներառվել են գնահատման ենթակա հայտերի մեջ:

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

## 4. ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոնշյալը՝ 2026թ. սեպտեմբերի 02-ին Հանձնաժողովը որոշեց, Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և այդպիսին չճանաչված մասնակից հայտարարել սույն արձանագրության 3-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած Մասնակիցների թվից այն մասնակիցներին, ովքեր ներկայացրել են նվազագույն գնային առաջարկ:

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

## 5. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳԵՆԵՐԱՑՎՈՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ/ՆԵՐ/Ի, ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Ս. Մելքոնյանը ներկայացրեց գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված գնահատումների արդյունքում՝ համակարգի կողմից տրամադրված հայտարարություն/ներ/ի տեքստ/եր/ի նախագծերը:

2026թ. սեպտեմբերի 02-ին Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել համակարգի միջոցով գեներացվող հայտարարություն/ներ/ը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
2. Հաստատել համակարգի կողմից տրամադրված հայտարարության տեքստերը:

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

## 6. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ չեն եղել և պարզաբանումներ չեն պահանջվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց համակարգի կողմից տրամադրված պայմանագրերի նախագծերը:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել համակարգի կողմից տրամադրված պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը

2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված Մասնակից/ներ/ին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ սահմանված ժամկետում պայմանագիրը չստորագրելու, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում Մասնակիցը կզրկվի պայմանագիրը կնքելու իրավունքից՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ա. Ղուկասյան _______________

*Հանձնաժողովի անդամ՝*

Ա. Գալստյան _______________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Ս. Մելքոնյան _______________